

գտանել եւ զգրաւոր կարգ կամ կանոն ձիաւորութեանն, եւ եթէ օրէն իցէ ասել՝ զձեռնադրութեանն, որպէս զթագաւորին. զի հարկ է ամենայնիւ՝ թէ շարագրեալ կամ թարգմանեալ էր եւ այս օրհնութիւն ՚ի հայումս. այլ ցարդ ոչ հանդիպեցաք:– Կարելորագոյն եւս էր գիտելն՝ թէ յի՞նչ անուն եւ ձեւ կոչէին Ձիաւորքս Հայոցս. ըստ միո՞յ յերից այնր ժամանակի հոչակեալ կարգացն (Հիւանդանոցին, Տաճարականաց եւ Տեւտոնաց), եթէ մանաւանդ ա՛յլ ինչ օրինակ յարմարեալ, որպէս ՚ի դէպ է կարծել. ընդ սմին եւ հաւանել՝ թէ առ մերովս Լեւոնիւ հարկ էր ընդունելի լինել այսպիսոյ կարգաւորութեան, առ որով՝ թարգմանեցան եւ յերիւրեցան նախայիշեալ Թագաւորօրհնէքն եւ այլ կարգք եւ սահմանք հռոմեական եկեղեցւոյ եւ դարպասի: Է առ մեզ այսպիսի մատեան մի թարգմանեալ եւ գրեալ ՚ի ԺԴ դարու, բայց ոչ ունի զկարգ կամ զօրհնութիւն Ձիաւորի, այլ միայն զօրհնոց եւ զրահից, եւ դրօշու կամ նշանակի խաչակրութեան¹²¹: Հնագոյն գրիչք զասպետական կարգաց՝ ոչ յիշեն զՀայկական ինչ առանձինն. բայց հեղինակք ոմանք ԺԷ եւ ԺԸ դարուց՝ ոչ գիտեմ յորոց աղբերաց առեալ, ասեն եւ *Կարգ Հայ ասպետաց՝* հաստատեալ ՚ի ժամանակի հաստատութեան Տաճարականացն. այլ զի սոցայս հաստատութիւն եղեալ է յամի 1118 յԵրուսաղէմ, առ մերովս Ա Պարոն Թորոսիւ, թոռամբ Ռուբենի մեծի, ոչ կարծեմ զայդ ստոյգ. բայց հաւանագոյն զոր այլք ասեն՝ ՚ի թագաւորաց մերոց հաստատեալ. եւ ինձ սիրելի էր ասել ՚ի Լեւոնէ Ա թագաւորէ: Երկու դասք ասեն լինել ասպետացս Հայոց, մի եկեղեցականաց կամ քահանայից, եւ միւս՝ աշխարհայնոց. երկոցուն եւս նպատակ գոլով՝ բանիւ եւ զինու պաշտպանել զուղղափառ հաւատս, եւ կրօնաւորիլ կանոնօք Ս. Բարսղի. պաշտպան ունելով զՍ. Վլաս եպիսկոպոս (թերեւս զնոյն ինքն զՍ. Բարսեղ). վասն որոյ եւ *Սսպետք Ս. Վլասայ* կոչէին. որ եւ այս ոչ թուի ինձ

¹²¹ Օրինակի աղագաւ ընծայեցի մասն ինչ օրհնութեան

«*Ջրահի, Սանձուց, որ եւ Սլեհնոյ, եւ Հագուցաց պատերազմականաց եւ մարտից յազգս իւրեանց.*

Կնիք եւ օրհնութիւնն Աստուծոյ ամենակարողին Հօր ✠ եւ Որդւոյ ✠ եւ Հոգւոյն Սրբոյ ✠, եղիցի ՚ի վերայ այսմ Ջրահիցս (Ա. Ա.) եւ Հագուցացս (Ա. Ա.), եւ ՚ի վերայ ազանդին զսա. ՚ի յորս առհայելով՝ արդարութեամբ զգեցցի, նախախնամելով քո եւ ուղղելով, Տէր Աստուած մեր. որպէս զի զբարձողն սորա (Ա. Ա.) պահեցես անվնաս եւ աներկեղ, քաջամարտիկ եւ արիաբար զինակրել, եւ անսայթաք մնալ ամրափակ աջով քո. որ կենդանի եւ եւ թագաւորես, Աստուած, յաւիտեանս յաւիտենից»: